mary
CLINIC



Գնացուցակ

Մեր աշխատանքները և արժեքները

ՕՐԹՈՊԵԴԻԱ

- Մետաղակերամիկական շապիկներ (սկսած)	**45.000 դր**
- Ամբողջական կերամիկական շապիկներ (սկսած)	**90.000 դր**
- Ցիրկոնային շապիկներ (սկսած)	**80.000 դր**
- Վինիրներ (սկսած)	**90.000 դր**
- Ժամանակավոր շապիկներ	**6.000 դր**

ԹԵՐԱՊԻԱ

- Կոմպոզիտային վինիր	**33.000 դր**
- Ատամի էսթետիկ պլոմբավորում (սկսած)	**15.000 դր**
- Ատամի պսակային դիստալիզացիա	**10.000 դր**
- Ատամի դիստալիզացիա մինի-իմպլանտով	**50.000 դր**

ԿԵՐԱՄԻԿԱԿԱՆ ՎԻՆԻՐՆԵՐ

Կերամիկական վինիրները շատ բարակ կիսաշապիկներ են.ընդամենը 0,2-0,5մմ բարակությամբ:

Ո՞ր դեպքերում է ցուցված վինիրների տեղադրումը՝

- Էմալի գույնը փոփոխվել է՝ դառնալով դեղին կամ մոխրագույն,
- Ատամնաշարն ընդհանուր առմամբ ուղիղ է, սակայն կան քիչ թեքված ատամներ, որոնք խանգարում են ձեզ լիարժեք ժպտալ
- Ճեղքեր ատամների միջեւ. դիաստեմա (վերին ծնոտի կենտրոնական կտրիչների միջեւ եղած բաց տարածությունը) եւ տրեմա (ատամների միջեւ եղած տարածությունները)
- Մգացած, շերտավորված պլոմբաներ

Ինչպես է իրականացվում վինիրներով բուժումը

1) Քանի որ վինիրները շատ բարակ կիսաշապիկներ են, ապա ատամները շատ քիչ մշակման են ենթարկվում, երբեմ կարող են նաև բացարձակ չմշակվել:
2) Ստանում ենք ատամնաշարի չափը, միասին որոշում ենք,թե այցելուի ապագա ատամնաշարը ինչ գույնի է լինելու, որպեսզի և բնական լինի, և սպիտակ: Լուսանկարում ենք ատամները, լուսանկարներն ու չափսերն ուղարկում ենք լաբորատորիա:
3) Հաջորդ այցին փորձարկում ենք վինիրները՝ գնահատելու գույնը, տեսքը, անատոմիան:Ուղարկում ենք լաբորատորիա վերջնական շտկումների համար:
4) Ֆիքսում ենք վինիրները:

Արժեքը՝ **90.000 - 110.000 դր**
Այցի տեւողությունը՝ **1,5ժամ**
Այցերի քանակը՝ **3 - 4**

ԿԵՐԱՄԻԿԱԿԱՆ ՆԵՐԴԻՐՆԵՐ

Ներդիրը ամբողջությամբ կերամիկայից պատրաստված կիսաշապիկ է, որը տարբերվում է պլոմբից իր ամրությամբ, էսթետիկությամբ եւ երկարակյացությամբ:

Ո՞ր դեպքերում են օգտագործում
Կիրառվում է ծամող ատամների վերականգնման համար այն դեպքերում, երբ
- պսակի մեծ մասը՝ 50% ավելին բացակայում է
- պլոմբավորում արդեն անհնար է,
- առկա է ատամների վաղաժամ մաշվածություն:

1) Կլինիկա առաջին այցի ընթացքում կատարվում է տվյալ ատամի ռենտգեն, արմատախողովակների բուժում, անհրաժեշտության դեպքում նաեւ վերաբուժում:
2) Ստանում ենք ատամնաշարի չափսը, որոշում ատամների գույնը, որպեսզի ներդիրը չտարբերվի ձեր ատամների գույնից:
Լուսանկարում ենք ատամները, լուսանկարներն ուչափսերն ուղարկում ենք լաբորատորիա:
3) Հաջորդ այցին փորձարկում ենք ներդիրը՝ գնահատելու գույնը, տեսքը, անատոմիան:
4) Ֆիքսում ենք ներդիրը:

Արժեքը՝ **90.000 - 100.000 դր**
Այցի տեւողությունը՝ **1 - 1,5ժամ**
Այցերի քանակը՝ **3 - 4**

ՄԵՏԱՂԱԿԵՐԱՄԻԿԱԿԱՆ ԵՒ ՑԻՐԿՈՆԱՅԻՆ ԿԵՐԱՄԻԿԱԿԱՆ ՇԱՊԻԿՆԵՐ

Երբ արդեն համարյա ամբողջությամբ բացակայում է ատամի պսակը, այն վերականգնում ենք շապիկների օգնությամբ:

1) Կլինիկա առաջին այցի ընթացքում կատարվում է տվյալ ատամի կամ ատամների ռենտգեն, արմատախողովակների բուժում, անհրաժեշտության դեպքում նաեւ վերաբուժում:
2) Մշակում ենք ատամները, ստանում ատամնաշարի չափսը, որոշում ատամների գույնը, որպեսզի ապագա շապիկները չտարբերվեն ձեր ատամների գույնից: Լուսանկարում ենք ատամները, լուսանկարներն ու չափսերը ուղարկում ենք լաբորատորիա:
3) Պատրաստում եւ տեղադրում ենք ժամանակավոր շապիկներ, որոնք նպաստում են լնդերի ճիշտ ձեւավորմանը մինչ մշտական շապիկների տեղադրումը, ինչպես նաեւ շապիկների պատրաստման փուլում դուք առանց ատամ չեք մնում:
4)Հաջորդ այցին փորձարկում ենք շապիկները՝ գույնը, տեսքը, անատոմիան գնահատելու եւ շտկումներ անելու համար:
5)Լաբորատորիայում կատարվում են վերջնական շտկումները, որից հետո արդեն կլինիկայում տեղադրվում են շապիկները:

Արժեքը՝ **45.000 - 90.000 դր**
Այցի տեւողությունը՝ **1 - 1,5ժամ**
Այցերի քանակը՝ **3 - 4**

ՎԻՐԱԲՈՒԺՈՒԹՅՈՒՆ

- Ատամի հեռացում (սկսած)	**6.000 դր**
- Ռետենցված ատամի հեռացում	**50.000 դր**
- Լնդային պլաստիկա	**30.000 դր**
- Ոսկրային պլաստիկա (սկսած)	**50.000 դր**
- Իմպլանտի տեղադրում (սկսած)	**135.000 դր**

ՊԱՐՈԴՈՆՏՈԼՈԳԻԱ

- Ատամի վիրաբուժական երկարացում	**20.000 դր**
- Բաց կյուրետաժ (1 ատամ)	**15.000 դր**
- Փակ կյուրետաժ (1 ատամ)	**3.000 դր**

ԻՆՉՊԵՍ Է ԻՐԱԿԱՆԱՑՎՈՒՄ ԻՄՊԼԱՆՏԱՑԻԱՆ

Խորհրդատվության ժամանակ իրականացվում է ծնոտների 3D համակարգչային տոմոգրաֆիկ հետազոտություն եւ պլանավորվում է բուժումը, նշանակվում է իմպլանտացիայի իրականացման օրը:

ԻՄՊԼԱՆՏԱՑԻԱ

Հարմար տեղավորվում եք ստոմատոլոգիական բազկաթոռին, միացնում ենք ձեր նախընտրած երաժշտությունը կամ ֆիլմը: Իմպլանտացիայի ժամանակ կատարվում է տեղային անզգայացում (ձեր ցանկությամբ իմպլանտացիան կարող է իրականացվել նաեւ ընդհանուր անզգայացմամբ):

1 ԲԱՑԱԿԱ ԱՏԱՄԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ ԻՄՊԼԱՆՏՈՎ

Բուժման այս տարբերակը իդեալական լուծում է 1 բացակա ատամի համար: Հնարավորություն է տալիս վերականգնել բացակա ատամը՝ առանց վնասելու հարեւան ատամները՝ ի տարբերություն կամրջաձեւ պրոթեզի:

- Բացակա 1 ատամի տեղում դրվում է 1 իմպլանտ:
- Իմպլանտի վրա ֆիքսվում է շապիկը:

2 ԻՄՊԼԱՆՏՈՎ ԵՒ ՊՐՈԹԵԶՈՎ ԱՏԱՄՆԱԾԱՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ

Բուժման այս տարբերակը հարմար է այն մարդկանց համար, ովքեր

- ունեն լրիվ անատամ ծնոտներ
- չեն հարմարվում շարժական պրոթեզների անհարմարություններին
- ուզում են կարճ ժամանակում լուծել ատամների հետ կապված իրենց խնդիրը:

1) Խորհրդատվություն եւ բուժման պլանավորում

Կատարվում է խորհրդատվություն, 3D համակարգչային հետազոտություն, բուժման պլանավորում

2) Իմպլանտացիա

Տեղադրվում են 2 իմպլանտները, ստացվում են ծնոտի չափսերը եւ ուղարկվում լաբորատորիա:

3)Պրոթեզի տեղադրում

8-10 օր հետո տեղադրվում է նոր պրոթեզը: Եթե մինչ իմպլանտների տեղադրումը այցելուն արդեն կրում է պրոթեզ և ուզում է այն պահպանել, ապա հենց իմպլանտացիայի օրը իր պրոթեզը մշակվում է իմպլանտներին համապատասխան եւ տեղադրվում: Այս դեպքում ամբողջ պրոցեսը կատարվում է 1 այցի ընթացքում:

ALL ON 4

Բուժման այս տարբերակը կիրառվում է այն դեպքում, երբ այցելուի բոլոր ատամները հեռացված են կամ կենսունակ չեն եւ ցուցված են հեռացման:

- 1-ին փուլում իրականացվում է իմպլանտացիան,տեղադրվում է 4 իմպլանտ: Մինչեւ մշտական ատամների տեղադրումը՝ այցելուի ատամնաշարը վերականգնվում է ժամանակավոր պրոթեզի օգնությամբ:

- 2-րդ՝ օրթոպեդիկ փուլում իմպլանտների վրա ֆիքսվում է մշտական անշարժ ատամնաշարը՝ բաղկացած 10 ատամից:

6-8 ԻՄՊԼԱՆՏՈՎ ԱՏԱՄՆԱՇԱՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ

Իմպլանտացիայի այս տարբերակը այն մարդկանց համար է, ովքեր
- ունեն լրիվ անատամ ծնոտներ,
- չեն հարմարվում շարժական պրոթեզների անհարմարություններին,
- ուզում են լիարժեք եւ անշարժ տարբերակով լուծել ատամների հետ կապված իրենց խնդիրը:

Ատամնաշարի ամբողջական վերականգնման համար տեղադրվում է 6-8 իմպլանտ, որոնց վրա էլ 2-րդ փուլում ֆիքսվում է անշարժ ատամնաշարը՝ 12-14 ատամից բաղկացած:
Այցելուն շատ արագ հարմարվում է իմպլանտներով վերականգնված ատամնաշարերին՝ ընդունելով դրանք որպես սեփական ատամներ:

Տեւողությունը՝ **30ր-3ժ** (կախված տեղադրվող իմպլանտների քանակից)
Իմպլանտի արժեքը՝ սկսած **135.000 դր**

ԱՏԱՄՆԵՐԻ ՈՒՂՂՈՒՄ

- Մետաղական բրեկետներ (սկսած)	**390.000 դր**
- Կերամիկական բրեկետներ (սկսած)	**550.000 դր**
- Ինքնակապվող բրեկետներ (սկսած)	**600.000 դր**
- Շարժական ապարատներով բուժում (սկսած)	**100.000 դր**
- Սպլինտ-թերապիա	**200.000 դր**

ԱՏԱՄՆԱԾԱՐԵՐԻ ԵՎ ԿԾՎԱԾՔԻ ՈՒՂՂՈՒՄ

ՕՐԹՈԴՈՆՏԻԿ ԱՊԱՐԱՏՆԵՐՈՎ ԲՈՒԺՈՒՄ

Ծարժական ապարատները արդյունավետորեն կիրառվում են խառը կծվածքի փուլում, երբ երեխայի բերանում կան և՛ կաթնատամներ, և՛ մշտական ատամներ (մինչեւ 12տ):

Բուժման առավելություններն են

- ավելի մատչելի է, քան բրեկետային բուժումը,
- երեխան շատ հեշտ է հարմարվում ապարատին ,
- բուժումն ավելի կարճ է տևում:

Երեխան ինքն է ընտրում իր ապարատի գույնը, դեկորացիաները (փայլիկներ, աստղիկներ, մուլտերի հերոսներ), ինչի շնորհիվ նա ամբողջ բուժման ընթացքում սիրով է կրում իր ապարատները:

ՕՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԵՐԵԽԱՆ ՈՐՔԱՆ ՊԵՏՔ Է ԿՐԻ ԱՊԱՐԱՏԸ

Ապարատը կրում է հիմնականում գիշերը, ցերեկը ընդմիջումներով՝ ըստ բժշկի ցուցումների:

Բուժման տեւողությունը՝ **6 - 12 ամիս**

Այցերի քանակը՝ **8 - 10 (1-1,5 ամիսը մեկ անգամ)**

ԲՐԵԿԵՏԱՅԻՆ ԲՈՒԺՈՒՄ

1)Խորհրդատվություն
2)Ռենտգեն հետազոտություն

Կատարվում է ծնոտների 3D ռենտգեն հետազոտություն,ատամնաշարերի եւ պրոֆիլի լուսանկարներ, ստացվում են ծնոտների չափսերը:

3) Բուժման պլանավորում

Գիպսե մոդելների, ռենտգենների եւ լուսանկարների ուսումնասիրությունից հետո կազմվում է բուժման պլան:

4) Բրեկետների տեղադրում

ՄԵՏԱՂԱԿԱՆ ԵՎ ԿԵՐԱՄԻԿԱԿԱՆ ԲՐԵԿԵՏՆԵՐԻ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՄԵՏԱՂԱԿԱՆ ԲՐԵԿԵՏՆԵՐԸ՝

- ավելի մատչելի են,
- ամուր են, չեն կոտրվում,
- տեսանելի են շրջապատի համար:

ԿԵՐԱՄԻԿԱԿԱՆ ԲՐԵԿԵՏՆԵՐԸ՝
- էսթետիկ են,
- տեսանելի չեն,
- ավելի թանկ արժեն:

Բուժման տեւողությունը՝ **1-3տ**
Այցերի քանակը՝ **ամիսը 1 անգամ**

ԷԼԱՅՆԵՐ
- Խորհրդատվություն և չափսերի ստացում,
- Ծնոտների 3D համակարգչային հետազոտություն,
- Բուժման 3D պլանավորում և նախագծում,
- Էլայների պատրաստում,
- Տրամադրում այցելուին և դրանք կրելու գրաֆիկի ներկայացում:

Բուժման տևողությունը՝ **6 ամսից 2տ**

ՄԱՆԿԱԿԱՆ ՍՏՈՄԱՏՈԼՈԳԻԱ

- Ատամի հեռացում	**3.000-5.000 դր**
- Ատամի պլոմբավորում	**8.000-10.000 դր**
- Ատամի բուժում և պլոմբավորում	**15.000 դր**
- Ատամի տեղի պահպանիչ	**20.000 դր**
- Ատամների ռեմիներալիզացում	**20.000 դր**

ՄԱՆԿԱԿԱՆ ՍՏՈՄԱՏՈԼՈԳԻԱ

Պրոֆիլակտիկ այց եւ ատամնափառերի մաքրում

Մանկական ստոմատոլոգի մոտ երեխային այցելության պետք է տանել 6 ամիսը մեկ, անգամ եթե դուք որեւէ խնդիր դեռ չեք նկատում:
Այդ այցի ընթացքում մասնագետը մանրակրկիկ կզննի երեխայի բերանի խոռոչը, առկայության դեպքում կհայտնաբերի թաքնված կարիեսները, փայլեցնող մածուկով եւ փոքրիկ խոզանակով կմաքրի երեխայի ատամնափառերը:

Այցերի քանակը՝ **1 (6 ամիսը մեկ)**
Այցի տեւողությունը՝ **15-30ր**
Արժեքը՝ **3-5հզ**

ԱՏԱՄՆԵՐԻ ՖԻՍՈՒՐՆԵՐԻ ՀԵՐՄԵՏԻԶԱՑԻԱ

Ատամների ծամող մակերեսներն ունեն բնական փոսություններ, որտեղ շատ հաճախ կուտակվում են սննդային մանրէներ եւ նպաստում կարիեսի զարգացմանը: Հատկապես երեխաների մոտ կարիեսի զարգացումը շատ արագ է տեղի ունենում, այդ պատճառով անհրաժեշտ է երեխայի ծամող ատամների ֆիսուրները ամրացնել հերմետիկներով:
Հերմետիկով ամրացված ատամները շատ լավ են լվացվում խոզանակով եւ մածուկով, սնունդն այլեւս չի կուտակվում փոսիկներում՝ բացառելով կարիեսների առաջացումը:
Հերմետիզացիայի պրոցեսը շատ հեշտ է, անզգայացում չի կատարվում: Այցի ժամանակ մանկական ստոմատոլոգը հատուկ մածուկով փայլեցնում է ծամիչ ատամները եւ փոսիկները ամրացնում հերմետիկով:
Այցի տեւողությունը՝ **10-15ր**
Արժեքը՝ **5.000 դր (1 ատամ)**

ԿԱԹՆԱՏԱՄՆԵՐԻ ԿԱՐԻԵՍԻ ԲՈՒԺՈՒՄ

Կարիեսը երեխաների մոտ շատ արագ է զարգանում, քանի որ նրանց ատամների էմալը դեռեւս շատ փխրուն է եւ կայուն չէ մանրէների նկատմամբ: Շատ կարեւոր է վաղ փուլում հայտնաբերել կարիեսը, որպեսզի հնարավորինս քիչ էմալի հյուսվածքներ հեռացվեն եւ պահպանվի ատամի պուլպան (նյարդ): Վաղ փուլում կարիեսի պլոմբումը կատարվում է առանց անզգայացման : Երեխան ստոմատոլոգիական համասարքին միացված պլանշետի վրա ընտրում է իր սիրած մուլտֆիլմը եւ դիտում է այն՝ մոռանալով, որ իր ատամն են պլոմբում: Մանկական ստոմատոլոգը սկզբից փայլեցնող մածուկով մաքրում է երեխայի ատամը: Կարիեսային հյուսվածքները մշակելուց հետո կատարվում է ատամի պլոմբավորում:

Տեւողությունը՝ **30ր**
Արժեքը՝ **8.000 - 10.000 դր**

ՄՇՏԱԿԱՆ ԱՏԱՄՆԵՐԻ ՊԼՈՄԲԱՎՈՐՈՒՄ

Երեխայի առաջին մշտական ատամները սկսում են ծկթել 6տ սկսած: Մշտական ատամները ծառայում են երեխային ամբողջ կյանքի ընթացքում: Հետեւաբար շատ կարեւոր է դրանք առողջ պահելը: Մշտականների դեպքում եւս անհրաժեշտ է վաղ փուլում հայտնաբերել կարիեսները եւ բուժել:
1)Այցի ժամանակ բժիշկը ռաբերդամով տվյալ ատամը մեկուսացնում է բերանի խոռոչից, որպեսզի պլոմբավորումը լինի հերմետիկ:
2)Մաքրում է ատամը փայլեցնող մածուկով:
3) Հեռացնում է կարիեսով ախտահարված հյուսվածքները:
4) Լուսակարծրացող պլոմբանյութով վերականգնվում է ատամի անատոմիական տեսքը և գույնը.շատ կարեւոր է ծամող մակերեսների ճիշտ անատոմիական վերականգնումը, որը կնպաստի սննդի ճիշտ մանրացմանը եւ մարսողական համակարգի բնական աշխատանքին:

Պրոցեդուրայի տեւողությունը՝ **1-1,5ժ**
Արժեքը՝ **15.000 - 20.000 դր**

ԱՏԱՄՆԵՐԻ ՍՊԻՏԱԿԵՑՈՒՄ

- Ատամների Zoom 4 սպիտակեցում	**150.000 դր**
- Ատամների սպիտակեցում Opalescence	**90.000 դր**
- Ատամների տնային սպիտակեցում	**50.000 դր**
- Բերանի խոռոչի պրոֆեսիոնալ հիգիենա	**10.000 դր**

ԻՆՉՊԵՍ Է ԻՐԱԿԱՆԱՑՎՈՒՄ ZOOM 4 ՍՊԻՏԱԿԵՑՈՒՄԸ

Այցի ընթացքում դուք
- Հանգիստ տեղավորվում ենք ստոմատոլոգիական բազկաթոռին,
- Ականջակալներով լսում եք ձեր սիրելի երաժշտությունը,
- Դիտում եք ֆիլմ:
- Ստոմատոլոգ-հիգիենիստը ատամների վրա տարածում է սպիտակեցնող նյութը, որն ակտիվացվում է Philips ընկերության Zoom 4 լամպի օգնությամբ:
- Իրականացվում է 3-4 պրոցեդուրա 1 այցի ընթացքում:
- Պրոցեդուրայից հետո ատամները ծածկվում են մուսսով, որն ամրացնում է ատամները եւ փայլ հաղորդում դրանց:

Ճիշտ հիգիենայի եւ սննդակարգի դեպքում արդյունքը պահպանվում է մինչեւ 5-6տ:

Պրոցեդուրայի տեւողությունը՝ **1,5 - 2ժամ**
Այցերի քանակը՝ **1**
Արժեքը՝ **150.000 - 200.000 դր**

OPALENSCENCE BOOST ՕՖԻՍԱՅԻՆ ՍՊԻՏԱԿԵՑՈՒՄ

Կատարվում է կլինիկայում 1 այցի ընթացքում: Այցի ընթացքում դուք
- Հանգիստ տեղավորվում եք ստոմատոլոգիական բազկաթոռին,
- Դնում ականջակալները եւ միացնում ձեր սիրելի երաժշտությունը,
- Դիտում եք ձեր նախընտրած ֆիլմը՝ բազկաթոռին ամրացված պլանշետով:
- Ստոմատոլոգ-հիգիենիստը ատամների վրա տարածում է սպիտակեցնող նյութ, որը ներթափանցում է ատամի հյուսվածքներ եւ սպիտակեցնում է գունափոխված հատվածները:

Պրոցեդուրայի ավարտին ատամները ծածկվում են պաշտպանող մուսսով, որն ամրացնում է ատամները:

Պրոցեդուրայի տեւողությունը՝ **60ր**
Այցերի քանակը՝ **1**
Արժեքը՝ **90.000 դր**

ԻՆՉՊԵՍ Է ԻՐԱԿԱՆԱՑՎՈՒՄ ՏՆԱՅԻՆ ՍՊԻՏԱԿԵՑՈՒՄԸ

Տնային սպիտակեցումը կատարում եք դուք՝ ձեզ հարմար վայրում (տանը, օֆիսում): Մինչ սպիտակեցումը կլինիկայում խորհրդատվություն եք անցնում բժշկի մոտ:
- Կլինիկայում հատուկ ձեր ատամնաշարերի համար պատրաստվում են անհատական կապաներ,
- Ձեզ տրամադրվում է սպիտակեցնող նյութը եւ բացատրվում է կիրառման մանրամասները,
- Տանը կամ ձեզ հարմար վայրում դուք ինքներդ, ըստ բժշկի ցուցումների, կապաների մեջ լցնում եք սպիտակեցնող գելն ո հագցնում եք դրանք ատամնաշարերին:
- Սպիտակեցման պրոցեսը օրվա ընթացքում կարող է տեւել 2-8 ժամ. կախված է նրանից՝ բժիշկը գիշերային թե ցերեկային սպիտակեցում է նշանակել ձեզ: Կապաները ձեր սեփականն է եւ անհրաժեշտության դեպքում կարող եք ցանկացած ժամանակ,խորհրդակցելով բժշկի հետ, կատարել տնային սպիտակեցում: Այդ դեպքում գնելու եք միայն սպիտակեցնող գելը:

Սպիտակեցման կուրսի տեւողությունը՝ **7-14 օրը**
Արժեքը՝ **50.000 դր**

ԻՆՉ Է ՊԵՏՔ ԻՄԱՆԱԼ ԱՏԱՄՆԵՐԻ ՍՊԻՏԱԿԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ատամների սպիտակեցման արդյունքի երկարատեւ պահպանման համար անհրաժեշտ է 6 ամիսը մեկ կատարել ատամների պրոֆեսիոնալ մաքրում հիգիենիստի կողմից, սննդակարգում նվազեցնել գունավոր մթերքները, տարին 1 անգամ բժշկի ցուցումով իրականացնել ատամների տնային սպիտակեցում կապաների օգնությամբ, որոնք տրամադրվում են կլինիկայում ձեր այցի ժամանակ

Շնորհակալություն

Հավելյալ ինֆորմացիայի համար այցելեք կայք

maryclinic.am